

ճակի մէջ դնեն, որպէս զի մարտի սկիզբը նաւատնոր ճիւղն Ժողովին, ուր Պաղատեացի կայսրն ու կայսրուհին զանիկա պիտի տեսնեն կրօնէն, երբ Վերթիւթի թաղուհի զայն պիտի տեսնէ իր թանկերէն Վերթիւթի:

ԻՏԱԼԻԱ: Սարաքինայի մէջ առ միջոցին երկու զինուոր խնդիր ամենուն ուշադրութիւնը գրաւած է:

Մարտինէն է՝ Սարաքինայի տէրութեան Վերթիւթի ու Պաղատեացի տէրութեանց հետ միասնաբար եւ բաժնի գնումը թաղան պատրաստութիւնները: Երկրորդն է՝ Սարաքինայի տէրութեան մէջ գտնուած վանքերուն մէկ մասը գոցելու եւ եկեղեցւոյ եկամուտները աւելի հաւասար կերպով եկեղեցականաց բաժնելու պատրաստութեամբ կառավարութեան կողմէն պատգամաւորաց խորհրդարանին առաջարկուած օրինակները:

Աս օրէնքը առաջարկվելուն պատճառները հասկնալու համար, արժան է հիշել Սարաքինայի քանի մը մանրամասն տեղեկութիւններ առ Սարաքինայի տէրութեան մէջ գտնուած կրօնական կարգերուն եւ եկեղեցւոյ ունեցած եկամուտները վայժ՝ գաղղկական Բաբի լրագրին գրված նամակէ մը առնելով:

Սարաքինայի տէրութեան մէջ առ օրուան օրս 71 տեսակ կրօնական կարգ կայ 604 տան կամ գերդաստանի բաժնւթիւ, որոնք 8563 կրօնաւորէ կը բաղկանան: Աս տեսակները հարստութիւնը 45 միլիոն ֆրանք կամ 450 հազար քաակ, եւ եկամուտը 2 միլիոն ու կէս ֆրանք կամ 25 հազար քաակ կը հաշուուի:

Սարաքինայի կառավարութիւնը կ'ուզէ առ կրօնական տունները դոյնել բացառնողմէ՝ որոնք քարոզելու կը թելու եւ հիւանդաց օգնելու պաշտօն ու նպատակ ունեն: Մնացածներուն համար մինչեւ ցմահ թոշակ կ'ապել կ'ուզէ, որ 250 էն մինչեւ 750 ֆրանք կը տարբերի:

Օրինակներ երկրորդ մասը եկեղեցւոյ եկամուտը կը վերաբերի, որն որ կառավարութիւնը կ'ուզէ կրօնից պիտայիցը յարմար կերպով մը եկեղեցականաց բաժնել:

Եկեղեցւոյ անշարժ ստացուածքներուն ու կալուածներուն դումաշը 400 միլիոն ֆրանքի կը հասնի. որոնք տարին 17 միլիոն ֆրանք եկամուտ կը բերեն:

Սարաքինայի տէրութեան մէջ 7 արքեպիսկոպոսական ու 31 եպիսկոպոսական աթոռ կան, որոնք 1 միլիոն 400 հազար ֆրանք տարեկան եկամուտ ունեն: Օրինակի համար Թուրքիի արքեպիսկոպոսական աթոռը 120 հազար ֆրանք եկամուտ ունի. Նապոլայի 105 հազար ֆրանք. Վերթիւթի 105 հազար ֆրանք. Օրթութանի եւ Սարաքինայի կողմէն 100 հազար ֆրանքէն աւելի: Աս հարստութիւններուն առջեւ 2,500 քահանայ կայ՝ որոնց եկամուտը տարին 800 ֆրանքի չհասնիր, հետեւաբար սպառնալու ներքինի կը քաշեն. ուստի կառավարութիւնը պարտաւորված է՝ տարուէ տարի տէրութեան գանձէն 921, 873 ֆրանք օգնութիւն ընելու քահանայից: Աս վեճակը մինչեւ անցեալ տարի տեսնուց. բայց պատգամաւորաց խորհրդարանը միշտ ոտը կոխելով որ աստուծոյ տէրութեան գանձէն չարվի, այլ եկեղեցւոյ եկամուտներէն արվի, կառավարութիւնը պարտաւորեցաւ վերջիշեալ օրէնքը առաջարկելու: Հարկ չէ ը-

սել թէ՛ առ առաջարկութիւնը բարձրագոյն եկեղեցականներուն կողմէն ստատիկ ընդգիծութիւն կը գտնէ. եւ կ'երեւայ որ մեծ վեճակի ծագի ներքինէն:

ՌՈՒՄԵ: Բեդրաստիւրի լրագրող մայրաքաղաքին հիւանդանոցներուն մէջ ուռուցող վերակոր գոյքերուն երաժ մարգարտական ու դոյրովար խնամքը վերայ հետեւեալ գովեստը կ'ընէ:

Ճամբիա գոհութիւն մը կ'ըզանք որոնք մեծ հասարակութեան ծանուցանելով թէ՛ Վ. Պօլս տարված Ռուս վերաւորները գաղղկացւոյ հիւանդանոցներուն մէջ Վերթիւթի Բոյրբուսն կողմէն վերջին ստաժան գործակալը խնամք մը կ'ընդունին:

Այս միանձնուհիները իրենց սուրբ կոչմանը համեմատ մարդկային փառաց օգնութեան կը հասնին կատարեալ քրիստոնէական հոգածութեամբ մը, առանց ազգի եւ ծիսի խորութիւն ընելու գործող ստապիւրի մէջ: Վերթիւթի ու Սարաքինայի երաժ հիւանդանոցները գնեցին ու անոնց հաղցուցին: Զարմանալի խնամք ու գովեստը ցոյց տալով մեր խելք վերաւորներուն ինչպէս գաղղկացւոյ:

Երանելի մեր առ անկողն շնորհակալութեան նուէրը հասնել այն արժանապատիւ միանձնուհիներուն, որոնք Վստուած միայն կրնայ վարձատրել իրենց արժանաւորութեանը համեմատ՝ այն գովեստն պաշտօնին փոխարէն, որ ասանկ փեմ կերպով կը վարեն աշխարհիս վրայ:

Սեփակութիւնը մէջ գտնուած ուռուցող հիւանդանոցներէն Վ. Վերթիւթի կողմէն դրած ու Բեդրաստիւրի լրագրին մէջ հրատարակուած մէկ տեղեկագիրը կը ծանուցանէ թէ, հիւանդներ 5 էն մինչեւ նոյեմբեր 17՝ Սեփակութիւնը մէջ հետեւեալ կ'որոշուէ եղիւրէ: 1 զօրապետ մեռած ու 3 զօրապետ վերաւորված ընդհանուր զոհուածքներն ու 24 վերաւորված. ստորին կարգի սպայներէն 14 մեռած ու 104 վերաւոր. աւելի ստորին սպայներէն եւ ծովային զօրքերէն 789 մեռած ու 2,934 վերաւորված:

ՅՈՒՆԵՍԿԵ: Եթէնքէն եկած վերջին լուրերը կը ծանուցանեն թէ, Վաղղից գետապան Պ. Գօրթ-Ռուան Գաբիլ կանչվելով, անոր տեղը Պ. Մեռաթէ Վաղղից գետապան խրկվել է Եթէնք: Պ. Մեռաթէի հետ Եթէնք հասնել է միանդամայն եւ Պալէստինայի տէրութեան նորընտիր գետապան Պ. Գեհար:

ԱԶԳԱՅԻՆ

Վրացի գերագոյն ժողովը միակամ հաճութեամբ եւ խորհրդով ամենապատիւ արքայան Պառլիաքի վրաստան գամ անուանեցին Հոգեւորական ժողովին գերապատիւ Ս. Մատթէոս Արքեպիսկոպոսականին պատրիարքն Ստաւրոպոլս, եւ գերապատիւ Ս. Վեդրդ Արքեպիսկոպոս բարեխնամ առաջնորդն Պրուսպոլ, որպէս եւ կանխաւ նոյն ժողովին անդամ անուանեալ էր գերապատիւ Ս. Սարապիս Արքեպիսկոպոս պատրիարքական փոխանորդն եւ բարեկարգ առաջնորդն վեճակին Սեբաստիոյ:

Այս նոր եւ խոհական անօրէնութիւնը յոյս մեծ կուտայ ազգային հոգեւոր գործոց ամեն կերպով բարեկարգ յառաջադիմութեանը վրայ: Երբ Սեբաստիոյ յոյս մեծ կուտայ ազգային հոգեւոր գործոց ամեն կերպով բարեկարգ յառաջադիմութեանը վրայ: Երբ Սեբաստիոյ յոյս մեծ կուտայ ազգային հոգեւոր գործոց ամեն կերպով բարեկարգ յառաջադիմութեանը վրայ: Երբ Սեբաստիոյ յոյս մեծ կուտայ ազգային հոգեւոր գործոց ամեն կերպով բարեկարգ յառաջադիմութեանը վրայ:

վեր Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ անտեսութեանը մէջ ցուցնա՞ծ խնամաւ եւ խոհական գնացքին ալ յայտ խի է լուծեան ազգիս:

(Հարգելի)

Պաղատեացի վեճակին առաջնորդ Արքեպիսկոպոս Ս. Մատթէոս ծայրագոյն վարդապետը որ ժամանակաւ քսան եւ չորս տարի շարունակ Նոգդատու վեճակին առաջնորդութեան պաշտօնը վարած է ամենայն խոհեմութեամբ, ազգային շնորհաւոր եւ աշխարհական ժողովող անօրէնութեամբ եւ Սեբաստիոյ Արքեպիսկոպոս Պառլիաք Ս. Մատթէոս վեճակին առաջնորդ անուանեցաւ: Պաղատեացի վեճակին ալ իր վերայ ունենալով:

Աս ընտրութիւնը մեծ գոհութեամբ ընդունվեցաւ Նոգդատու եւ Պօլսի հայ ժողովուրդէն, որոնք անցեալ շաբաթու երկու յայտարար գիր յուղարկեցին ի Պառլիաքարան բոլոր եկեղեցականաց եւ աշխարհական իշխանաց ստորագրութեամբ ու կըրօնը եւ իրենց շնորհակալութիւններն կը յայտնեն:

Նոգդատու վեճակը Վերթիւթի Արքեպիսկոպոս Վաթիկէի Տոգեւոր իշխանութեան տակն է, միշտ բայց անցեալ տարիները վեճակաւոր իշխանութեանը մէջ, հարկ եղաւ հոգեւոր աւատ մը Վ. Պօլսին խրկել վեճակաւորութեանը համար, եւ հետցհետք քանի մը փոխանորդ վարդապետներ խրկվեցան. այսու ամենայնիւ վեճակը բոլորովին հանգարանելուն, վերջապէս Նոգդատու վեճակին առաջնորդութիւնը Սեբաստիոյ վեճակին առաջնորդ Վերապատիւ Ս. Պառլիաք Արքեպիսկոպոսին կուտային, յանձնվեցաւ, որ անմիջապէս հոն երթալով իր բնածին խոհեմութեամբ կարող եղաւ սիրտերը հանգարտեցնելու, եւ բոլորեքեալ կիրքերը մարելով քրիստոնէական սէրն ու միաբանութիւնը նորին հաստատեց:

Իսկ հիմա յիշեալ Սեբաստիոյ առաջնորդ Արքեպիսկոպոսը՝ Պառլիաքարական փոխանորդութեան պաշտօնն ալ վարելով մայրաքաղաքին մէջ, եւ իր ըզբաղմունքները շատ ծանրանալով, արժան գտնվեցաւ որ, գտնէ Նոգդատու վեճակին առաջնորդութեան ծանրութիւնը փոխէն անընդհատ եւ ուրիշ մը յանձնվի, որն որ կատարվեցաւ վերջիշեալ Ս. Մատթէոս խոհեմաբայ վարդապետին ընտրութեամբ:

Հանդէպութեամբ հայ հասարակութիւնը բազմակից յայտարար դրութեամբ իրենց խորին շնորհակալութիւնն ու գոհութիւնը կը յայտնեն իրենց նորընտիր առաջնորդ գոծապետ Սեբաստիոյ եպիսկոպոսին հայրական կառավարութեան, որ անդաւար փութով կ'աշխատի ժողովրդեան բարոյական վեճակը լուրջնելու, եւ ուսումնասիրական եւ անդրաւորնայն արտին մէջ բոլորեքեալ մտնէ եւ աղջիկ տղոց դպրատուններուն թիւը աւելցնելու: Ասոցմէ զատ՝ մեծ խնամ կը տանի նաեւ եկեղեցեաց պաշտօնութեանը եւ քահանայից բարեկարգութեանը, եւ անդաւար քարոզութեամբ եւ հայրական յորդորմաբ քրիստոնէական սէրն ու միաբանութիւնը ամենուն արտին մէջ հաստատելու կը ջանայ, որով ազգային միութեանն եւ ուղղափառ սուրբ Եկեղեցին գանազան պատճառաւ բաժանեալ քանի մը անձներ՝ հետցհետք գտ-

նալու եւ միաբանելու սկսել են. եւ այսպէս Հանդէպութեան ժողովուրդը յիշեալ բարեխնամ Հովութիւն արթնուն եւ խոհեմ կառավարութեան շնորհիւ, տարահով եւ հանգիստ վեճակի մէջ կը գտնվի հիմայ:

Սեբաստիոյ Արքեպիսկոպոս Պառլիաք Ս. Վաղղիցի Հոգեւոր եւ Վերթիւթի հիւանդանոցները այս արժանի հովութիւն քանաճան փառաբանող վարձատրութիւն մը ընելու եւ իր գովելի ընթացքը քաջաբերելու համար, աս օրերս Բ. Պօլսին առաջնորդական արքունի հրովարտակ մը տալին անոր անուանը, եւ Պառլիաքարական կոնդակաւ իրեն խրկեցին:

Ուրիշ յայտարար գրութիւն մըն ալ Արքեպիսկոպոս առաջնորդ Վ. Պօլսից շնորհակալ Ս. Զօհաննէս վարդապետը եւ տեղւոյն բարեկարգ հասարակութիւնը խրկած են Սեբաստիոյ Արքեպիսկոպոս Պառլիաքին: Աս վեճակին մէջ ալ քանի մը պարզամիտ անձներ որ իրենց հայրենի սուրբ եկեղեցին եւ ազգային միութեանն դժբաղդարար բաժնուած էին, վերջապէս սիրոյ եւ միաբանութեան դարձեր են:

Սեբաստիոյ գոհութեան եւ շնորհակալութեան զիբեր եկած են Տիգրանակերտի նորընտիր առաջնորդ Արքեպիսկոպոս Ս. Իսահակ գիւնական ծայրագոյն վարդապետին բարեխնամ կառավարութեանը համար: Ար յուսացուի որ այս բանիւրեւ Հովութիւն դպրատանց բարեկարգութեան եւ ծաղկելուն համար ունեցած ջանքը յաջող արդիւնքով պիտի պսակէ ի բարօրութիւն հայազգի ժողովրդոց տեղւոյն, որոնք ուսման եւ կրթութեան բարեկարգութեան մասնակից ըլլալու առաւելագոյն կարօտութիւն ունեն:

Վերջապէս օրօքն յունիս 25 թրւով հետեւեալ բերկրաւ լի լուրեր կը գրեն:

«Միջնորդներ մեր Արքեպիսկոպոս Սեբաստիոյ հայր իր հոգեւոր ողորմ Շնորհակալ Տիգրան վարդապետը Վիւմիւրմիւն խրկած էր, որ երեսուն տան չափ հայազգի ժողովուրդ կան, եւ եկեղեցի մը ունին՝ որուն երեսուն հազար դուռուշէ չափ դրամը տուանց մուրհակի եւ առանց շահու տուր անոր վրայ մնացելը՝ գրեթէ մոռցվել էր:

Տիգրան վարդապետը խոհեմութեամբ աշխատելով, եկեղեցւոյն տակները ողջնաց մուրհակի ու երաշխաւորութեան տակ գնելով, բանած շահերը ժողովեց առաւ, եւ այսուհետեւ բանեւելք շահը դպրատան եկամուտ կարգելով, կըրթութեան օգուտն ու կարեւորութիւնը հասկնալու տեղւոյն ժողովրդեանը, եւ գանաք յարգութեան իրենց գաղափարը բարեկարգելու:

Շնորհակալ վարդապետին ջանքն անօրու չեղաւ: Վրդապետութեան եւ ուսումնասիրութեան եւ անդր Վիւմիւրմիւնայի սակաւաթիւ հայ ժողովրդեան արտին մէջ փառեցաւ: Վ. Պօլսից Սեբաստիոյ Ստեփան աղան եւ անոր կըրարքը ձեռք գարկին կ'արդը բարեկարգելու: Սեբաստիոյ սուրբ Սահակեան դպրոցին յառաջադիմ աշակերտներէն Սիմէոն աւուտ ուսումնական փորձապետ մը Վ. Պօլսին բերել տուին: Աս օրերս կ'իմանանք որ՝ Սուրբ Լուսաւորի անուանը ընկերութիւն մըն ալ հաստատուել են, ու սիրով միաբանութեամբ կ'աշխատեն զբարոյն յառաջ տանելու, եւ մասնաւորապէս

Հայերէն լեզուն ուսումը տարածելու, ուսկից զԲարազարար զուրկ մնացած են:

Արդարեւ բերկրալի է անանկ ասանկ բարեկարգութեան հիմնարկութիւն մը եւ ուսման եռանդ մը այնպիսի անհատութիւն ու աղքատիկ հասունածի մը մէջ, եւ մանաւանդ քաղցրագոյն է յուսալ որ՝ աղքատիկ այլ եւ այլ բարեմասնութիւններէ զուրկ մնացած մեր այս հեռարեակ համազգեաց մանկտիւն՝ աս նորածողիկ Առաւորչեան ընկերութեան ջանքերը հայերեւոս Լայարաբար ապիտի տեսնելին քիչ ժամանակէն, եւ կրօնից, ազգութեան եւ մարդկութեան պարտաւորութիւնները՝ աղայութեան սորվելով՝ աղքատիկ պիտանացու անդամներ պիտի ըլլան:

Աս օրերս մեր Արքեպիսկոպոսոս բարեկարգեալ դպրոցին ալ տարեկան քննութիւնը կատարեցաւ շքեղ հանդիսի՝ ի ներկայութեան բազմաթիւ հանդիսականաց երկուց աղայաց՝ Լայոց եւ Յուսաց: Լանդիսին դահաղութիւն բազմալ էր մեր Արքեպիսկոպոսոս Առաջնորդ Գերապատիւ Տ. Երիստակէս արքեպիսկոպոսը եւ անոր քով Յուսաց Գերապատիւ Մեդիսկոպոսը քանի մը պատուաւոր եկեղեցականներով: Քննութեան ինքնութիւնն էին՝ քերականութիւն, ճարտասանութիւն, աշխարհագրութիւն, թուարանութիւն, յունարէն լեզու, գեղեցկագրութիւն, որոնց մէջ աղայոց ըրած յառաջադիմութիւնը եւ տուած յաջող պատասխանները բոլոր հանդիսականներն զմայլեցուցին:

Աս մեծահանգէս քննութեան մէջ մեր Գերապատիւ Արքեպիսկոպոս Տ. Երիստակէս արքեպիսկոպոսը անխնայ ջանքեր արդիւնքը յայտնի երեւցաւ, որուն մեր աղայիցէ վերջին աստիճան գոհ ըլլալէն զատ, մինչեւ անգամ Յուսաց Գերապատիւ Մեդիսկոպոսը անկեղծ գովեստներով իր սրտին գոհունակութիւնը յայտնեց զպրտտան ասանկ բարեկարգութեանը համար նորին սրբազնութեան ըրած փութածան հոգողութեանը վրայ, խոստովանելով որ՝ մեր դպրոցը բարեկարգութեան մասին իրենց մայր դպրոցը անցած կերեւի:

Քննութեան եւ պարգեւաբաշխութեան արարեցէն ետքը որ հայերէն եւ յունարէն գեղեցիկ ձառերով ու քաղցրանուաղ երգով մը վերջացաւ, Գերապատիւ Առաջնորդ Լայոսը՝ սրտաշարժ գեղեցիկ ատենարանութեամբ մը ջերմեռանդ բարեմաղթութիւններ ըրաւ աս բարձրեան Աստուած վասն անդին կենաց եւ յաջողութեան զենուց մեր առատաբուծ սիրելի ինքնակալին: Օրհնեց քաղաքիս մեծապատիւ ազգապետ իշխաններն ու Երչակունեան բարեջան ընկերութիւններ, որ դպրատան բարեկարգութեանն ու պայծառութեանը համար իրեն աջակցեցած են: Բազմերախտ դատաստաններ, որ աննախանձաբար իրենց գիտցածը սորվեցնելու կ'աշխատին, եւ ուսումնասիրման սրտաբեր մանկտիւն, որ իրենց միտքն ու սիրտը մշակելու եւ զիտութեամբ ու աւարկութեամբ զարգանալու ազնիւ եռանդով՝ վառված՝ անխնայ փութով իրենց դասերը սորվելու կ'զբաղին:,,

Ահայ Կամարակաղ դիզէն եկած նամակները բերկրաւոր լուրեր կուտան աղայախրաց՝ աս գեղին բնակաց ուսումնասիրական եռանդին վրայ, եւ զիտաւորակէս մեծ շնորհակարութիւն կը ցուցնեն վեճակին բարեկամ աս աշխարհ արժանապատիւ Տ. Պետրոս ծայրագոյն

վարդապետին, եւ դպրոցին միւլթիլիքի Մեծարգոյ Մանկրճեան մահտար Կարապետ աղային ըրած ազգասիրական ջանքերէն, որով գեղին դպրոցը բարեկարգութեամբ ծաղկելու վրայ է օր աւելոր:

Քննութեան 13 ին՝ դպրոցին աշակերտաց քննութիւնը կատարելի է գեղին եկեղեցւոյն մէջ շքեղ հանդիսի՝ ի ներկայութեան արժանապատիւ առաջնորդին, եւ գեղին բոլոր եկեղեցականներուն, իշխաններուն եւ ժողովուրդներ, եւ ամենքն ալ վերջին աստիճան գոհ եւ ուրախ եղեր են տեսնելով իրենց զաւակացը ըրած յառաջադիմութիւնը եւ ըստացած հմուտութիւնը քրիստոնէական հրահանգաց, հայերէն քերականութեան, թուարանութեան, ձայնաւորի եւ գեղեցկագրութեան ուսմանը ներուն մէջ, եւ ամենքն մէկէն ջերմեռանդ բարեմաղթութիւններ ընելով վասն անդին կենաց եւ յաջողութեան մեր առատաբուծ տիրոջ վեհապատուութեան Ապու-Իւ-Մէճիս կայսեր, նոր եռանդով մը վառվել են իրենց գովելի ջանքն ու խնամքը շարունակելու ի յարստեւ պայծառութիւնը դպրոցին:

Ար յուսանք որ, Կամարակաղ բարեկարգեալ դպրոցը աղին եռանդը՝ շքեղաց գեղեցիկ ժողովուրդին ալ յարգող մը կը լայ իրենց դպրոցները անանկ բարեկարգելու, եւ իրենց զաւակներն ուսման եւ կրթութեան անկշտեղ օգուտներուն մասնակց ընելու:

ՆԱԽՆ ԼՈՒՐԵՐ

(Պատասխան ինքնակալին կառավարութիւնը՝ աս օրերս դադարեցուց զօրքերուն յանձնեց նաեւ Այա-Սօֆիայի մօտ Տար-Իւ-Պոնուս ըստած համալսարանի մեծ պալատը:

Աս գեղեցիկ ընդարձակ շէնուածք գեւ կիսախառք ըլլալով, Գոսպիտի առաջին խառնարանի ճարտարապետին յանձնարկեալ առժամանակեայ կերպով զանկալ լինեցնել հիւանդանոց ըլլալու համար: Սարայ Պոնուսի զօրանոցն ալ նոյնպէս դադարեցուց յանձնարկեալ հիւանդանոց ըլլալու համար:

Մինչեւ հիմա դադարեցուց արված զանազան զօրանոցները դադարեցնելու պիտի 12 զենուորական հիւանդանոցի բաժնրկելով, 13 հազար անկողին պատրաստ ունենալու սահմանված են: Աս դպրոցի եւ Ալեկսիոսի հիւանդանոցներն ասոնցմէ զատ են:

Եւսկի վաշային Այալը Գապագի ծովեզրեայ տունը աս օրերս նուրբով սկսաւ հիւանդ ու վերաւոր զօրք մէջը գնելու համար:

Արալի օրը աւստրիական Էլեւէնէլ շոգեշարժ Ֆրեդրիկով մայրաքաղաքը հասաւ Աւստրիոյ նորընտիր գեպան Պ. Քոլլեր Սեպուհը:

Մայրաքաղաքին Աւստրիոյ նախորդ գեպան Պ. Պրուք Սեպուհը՝ երկու շաբթի օրը մայրաքաղաքէն ծամբայ ելաւ Թրիեստ եւ անկեղ Վիեննա եւ թալու համար, ուր՝ ինչպէս արդէն ծանուցած ենք, գանձուց պաշտօնեայ ընտրված է:

Գրքերի կայսերական զօրաց Էլեւէնէլ շոգեշարժ համար բացված կամուսարժատորադրութեանց գումարը արդէն 11 միլիոն (22 հազար քսակ) զուտուշտ անցաւ:

Խորքաները մէկ կողմէն կարվելով

հեղահեղ Գրքեր՝ իրկրկելու վրայ են:

Մինչեւ հիմա քսան հազար հատ իրկրկեցաւ: Բարձրագոյն Լաւեր փաշային քեռորդի եւ փաշայ Թիֆլիզ փաշան որ զենուորական արհեստին հմուտ եւ քաջ մարդ մըն էր, Գանուրի պատեւադրանքուն մէջ կրած աշխատութիւններէն հիւանդութիւն անխանայով՝ յունիս 28 ին մեռաւ Աօղէկէ:

Մարմինը Միւլթիլիք-Միւլթիլիք շոգեւնաւով մայրաքաղաքս բերվեցաւ ու հանդիսի Լաւի թաղվեցաւ:

Օգոստոսիս ինքնակալը Ալիպապապին եկած զօրքերուն հրամանատար Մէնէքլե Մէնէքլե փաշային երկրորդ կարգի Մէնէքլե պատուանշան շնորհեց:

Շինչաբթի օրը Գաղղիական Բեռլին շոգեւնաւը Ատանայէն եկաւ քանի մը հիւանդ ու հիւանդութեան ելած Գաղղիացի զօրք բերելով:

Շաբթի օրը գաղղիական Մէնէքլե շոգեւնաւը մայրաքաղաքս հասաւ Մարմինը, պատեւադրական պաշար, ձի, խոտ եւ զօրք բերելով:

Այս շոգեւնաւով եկաւ նաեւ Քամու զօրապետը, որ Գրքերի գաղղիական բանակին երրորդ բաժնին հրամանատար կարգված է:

Արալի օրը Գաղղիական Լաւեր շոգեւնաւը Ֆրեդրիկով բազմաթիւ զօրք եւ պատեւադրական պաշար բերաւ Թուրքիէն:

Այս օրը Գաղղիական Լաւեր շոգեւնաւն ալ Մարմինը հասաւ զօրք եւ պատեւադրական պաշար բերելով:

Արալի օրը Պրուք զօրապետը, որ իր առողջութիւնը հաստատելու համար Գրքերին Արալի գացեր էր, անցեալ շաբթի մայրաքաղաքս հասաւ, եւ հոս քանի մը օր կենալէն ետեւ՝ Գրքերը գնաց իր հրամանատարութիւնը վերադարձնելու տունը:

Արալի երեքշաբթի Աւստրիոյ նախորդ գեպան Պ. Պրուք սեպուհին պաշտպանութեանը առի կաքաւահանգէս (պալա) մը եղաւ Պէյօղլուի թաւրոնը՝ եղած արդիւնքը աղքատաց բաժնրկելու համար, եւ շատ երեւելի անձնք վեհանախարար մասնակց ըլլալով աս բարեկարգութեան զործին, 240 հազար զուտուշտ ժողովեցաւ:

Արալիսկոպոսին կը գրեն թէ, կուսակալ Բիւստէմ փաշային հոգողութեամբ Գրքանքը շքեղանքը երկար ժամանակէ ի վեր անհանգիստ ընող Լաւ օղլու Խանայի անուն աւագակապետը աս օրերս բռնորդի է:

Իզմիրի մէջ անգղիացեաց համար սահմանված հիւանդանոցին պատրաստութիւնները լինելը են: Աս օրերս 5-600 վնասու որ կամ հիւանդութեան ելած զօրք իրկրկելու են հոն:

Արալի հինգշաբթի Գարապեղի կամուսարժ բացվելու տուն հայազգի մը ծովն ինկաւ: Արալի մը վրայ ժողոված բազմութիւնը սկսան աղաղակել, բայց մէկը չէր համարձակել խնդին օգնութեան հասնելու որ խղրովելու վրայ էր: Այս միջոցին գաղղիացի զենուոր մը վրայ հասնելով՝ մէկէն ծովը նետվեցաւ լավելով: Քիչ մը ատեն երկուքն ալ աներեւոյթ եղան ջուրին տակը եւ ամեն մարդ կարծեց որ ծովուն տակը մնացին: Բայց շատ չանցաւ կտրիճ զենուորը հայազգիին օձիքէն բռնած ջուրին երեսը եկաւ: Այս ալ մը մօտեցաւ ու երկուքն ալ ներս առաւ: Լայազգին՝ կիս

խղրոված՝ մօտ տուն մը տարին ու պետք եղած խնամքը ընելով խնդը դուրս եկան: Իսկ վեհանախարար զենուորը բազմութեան մէջէն քաշվեցաւ գնաց ըսելով թէ՛ բաղնիք մտայ, երթաւ լաւ երբ չորցնեմ:

Ասանկ զմայլելի առաքինական զործ մը գովութեան կարօտութիւն չունի:

Առաջգական խեփին (քառուկա կամ կոմէլասթիք) զործածութիւնը գրեթէ ընդհանուր եղած է հիմա եւ ամեն օր ալ աւելալու վրայ է: Աս օրերս Պ. Տիւրան անուանով գաղղիացի մը առաջգական խեփ կարծր թիթեղ (թէնէքէ) մը հարկեց նաւերուն տակը պաշտելու (գարբամաք) համար փոխանակ պղնձ թիթեղի:

Աս բազադրութեան գերադասութիւնը սալ է որ՝ մեծագոյնը պէս չժանդոտի. ծովուն մէջ մտնուել (հոսուն) չկայեր, եւ նաւուն երեսը ողորկ եւ փայլուն կը պահէ: Աս առաջգական տակախները կրնան խիստ օգտակար կերպով զործածվել պատերու, տախտակամաներու (տեօշէմէ) եւ ուրիշ տեղերու վրայ՝ խոնավութեան աղտաւ պահելու համար:

Քալիֆօնիայի մէջ խոտ մը կայ որ առանց մշակելու ինքնիքն կը բուսնի: Աս խոտը սոյն մը կուտայ, որ ամենէն ընտիր օձաւին (սաղմին) բոլոր յատկութիւններն ունի, անանկ որ երկրին բնակիչները ուրիշ օձաւ չեն գործածելը բնաւ:

Աս գարմանալի խոտին սերմերը հիմա Լաւրոյա բերել, հոն մշակելու եւ շատցնելու կ'աշխատին:

Արալի օրը Գաղղիոյ լաւիքներն աս օրերս քանի մը գարմանալի եւ կարգէ դուրս գիւտելու վրայ կը խօսին, որոնք եթէ յաջողին, մարդկային հանձարոյն գլխաւոր պարծանքներուն կարգը պիտի գաավին:

Աս գիւտելուն առաջինէ՛ մէկ ժամու մէջ հարկը ժամու ծամբայ նամակ իրկել հեռուեալ եղանակաւ:

Արիւս խողովակ (պոնու) պիտի շինվին գեանին երեսը կամ տակը՝ ուղված երկայնութեամբ: Խողովակներուն երկու ծայրը եւ պետք ըլլայ նէ մէջ տեղերն ալ շոգեշարժ մեքենաներ պիտի շինվին խողովակներուն մէջ օդ փչելու համար: Արալիները քուտուէ կամ ուրիշ առաջգական (կասթիք) նիւթերէ շինված կը լըր տուփերու մէջ լցված՝ խողովակին մէջ պիտի դրվին, ու մեքենաներուն փչած օդին զօրութեամբ խողովակին մէկ ծայրէն մէկալը պիտի քշվին զրեթէ ուսմի արագութեամբ:

Արիւրոյն Գաղղիան ու Արալիան մէկ մէկու կցորդել Քալիֆի նեղուցին տակէն ծովուն յատակին վրայ խողովակաձեւ երկաթէ ծամբայ մը շինելով, ու մէջէն շոգեկառք անցնելով: Արալիով Գաղղիայէն Արալի անցնելու համար շոգեկառք նաւերու պէտք չմնար, եւ Քալիֆի ծովուն մակերեսացութիւններուն ու տեղատեղիներուն երեսէն քաշված նեղութիւնները վերջանալէն զատ, երկու ժամու ծամբան տասը րոպէի կ'ընայ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՏՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Գործընթաց քաղել, քաղելու եւ քեղելու բնական գործածութեանը համար:

Գործընթացի մէջ մարդ տունը եւ ջուրի մէջ խօթածի պէս-խօթելու ուրիշ մէկ կերպ մը ունի

